Դատարանի նման եզրահանգումը հիմնված է այն փաստի վրա, որ գործում առկա է միայն Գնահատող հանձնաժողովի՝ Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին որոշումը, որով Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով՝ անգործության ժամկետ է սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը և հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը, մինչդեռ գործում բացակայում է ապացույց առ այն, որ սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը պատվիրատուն ծանուցել է Հայցվորին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, ինչի պարտադիր պահանջի կատարումը միայն հնարավարության կտար Պատասխանողինգնահատել հայցվորի անգործությունը և կիրառել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետերի դրույթներ և Հայցվորին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Վերոգրյալից ելնելով՝ Դատարանը հայցը դիտում է հիմնավոր և բավարարման ենթակա, հետևաբար պետք է անվավեր ճանաչել «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից մսեղիքի ձեռքբերման նպատակով 08.04.2022թ.-ին հայտարարված «ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.06.2022թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ՝ «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով համապատասխան գործընթաց նախաձեռնելու մասին կայացված որոշումը:

**Դատարարանն անդրադառնալով դատական ծախսերի հարցին՝ գտնում է հետևյալը.**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ Դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցվորը հայցադիմում ներկայացնելիս նախապես վճարել է օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը և հայցը բավարարվում է՝ Դատարանը գտնում է, որ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ից հօգուտ «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի պետք է բռնագանձել 50000 ՀՀ դրամ, որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-րդ, 192-րդ հոդվածներով՝ Դատարանը,

## ՎՃՌԵՑ

«Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ հայցն ընդդեմ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի՝«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կարիքների համար մսեղիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված <<ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.06.2022թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից մսեղիքի ձեռքբերման նպատակով 08.04.2022թ.-ին հայտարարված «ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.06.2022թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ՝ «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով համապատասխան գործընթաց նախաձեռնելու մասին կայացված որոշումը ճանաչել անվավեր:

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ից հօգուտ «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի բռնագանձել՝ 50000 ՀՀ դրամ, որպես վճարված պետական տուրքի գումար:

Վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ այն ստանալուց հետո տասնհիգօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ծանոթություն: Սույն վճռի դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացվել, և վճիռը մտել է օրինական ուժի մեջ _____2022թ.:

ԴԱՏԱՎՈՐ Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ